ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունիսի 2013 թվականի **թիվ 147** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3–րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի «Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 129 որոշման մեջ կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1-ին կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության տեքստը «Մսին եւ մսամթերքին» բառերից հետո լրացնել «, ձկանը եւ ձկնամթերքին» բառերով».

2-րդ կետը լրացնել «, իսկ ձկանն ու ձկնամթերքին ներկայացվող պահանջների մասով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 147 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից» բառերով:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**